



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» փետրվարի 2016թ.

N 320/ԱՐ

ք. Ստեփանակերտ

**ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 119/Մ ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 23-ի N755-Ն որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 68-րդ կետի 9-րդ, 72-րդ կետի 1-ին և 2-րդ, 73-րդ կետի 7-րդ ենթակետերը ու հանրակրթական դպրոցներում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի վերահսկողության և ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հանրակրթական դպրոցների ղեկավարների դասալսումների նվազագույն քանակը ուսումնական տարվա ընթացքում սահմանել՝ տնօրենի համար՝ 150 դասաժամ, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի համար՝ 220 դասաժամ, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի համար՝ 80 ժամ, իսկ 0,5 հաստիքային միավորով աշխատող տնօրենի տեղակալների համար՝ համապատասխանաբար 110 և 40 դասաժամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարության 2005 թվականի դեկտեմբերի 7-ի «Դպրոցի ղեկավարների դասալսումների քանակը սահմանելու մասին» N 119/Մ հրամանը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ սույն հրամանը տպագրել <<Լուսարար>> պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դրել Վ. Հրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատանքային կրթության և սպորտի բաժինների, կրթության գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության վրա:



Handwritten signature

Ս. ԱՍՐՅԱՆ